



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ**

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

N ՍԳ/83-2019

ք.Արգաշատ


.. 15.05 2019թ.


ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի 2019 թվականի տարեկան ծրագրով.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Արգավանդի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում 2019 թվականի մայիսի 20-ից մինչև մայիսի 24-ը ներառյալ՝ 5 աշխատանքային օր, ընտրանքային կարգով իրականացնել ներքին աուդիտ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 7-րդ և 8-րդ գլուխների պահանջների կատարման նպատակով:
2. Ներքին աուդիտի իրականացման շրջանակում ընդգրկել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Արգավանդի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կողմից 2016 , 2017 և 2018 թվականների ընթացքում իրականացրած ֆինանսական գործառույթները, գնումների գործընթացները, նախատեսված և կատարված փաստացի ծախսերի համեմատումը, աշխատավարձերի հաշվարկման կարգը, հաշվետվությունների արժանահավատությունը և համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին:
3. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Նելլի Սիմոնյանին՝ կատարել գործուղման ծախսերի վճարում:

 Восстановимая подпись

X 

ԳԱՐԻԿ ՄԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝

Подписано: SARGSYAN GARIK 2811870695

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ